ԽԱՉԱԿԻՐ ՕՐԴԵՆՆԵՐԻ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ս. Վ. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ

Կիլիկիայի հայկական իշխանության ստեղծման շրջանը զուգադիպեց Մերձավոր արևելքում տեղի ունեցած խաչակրաց արշավանքներին։ Խաչակրաց առաջին արշավանքը, հետ մղելով սելջուկներին Փոքր Ասիայի և Սիրիայի ծովամերձ շրջաններից, հնարավորություն տվեց Լևոնային Կիլիկիայում իշխող Ռուբինյաններին՝ նվաճելու բյուզանդացիների և սելջուկների տիրապետության տակ գտնված Դաշտային Կիլիկիան։ Սակայն Կիլիկյան հայկական պետությանը խաչակիրների հասցրած տևական վնասն ավելի մեծ եղավ, քան նրանց տված ժամանակավոր օգուտը[1]։ Խաչակիր ֆեոդալները հանդես էին գալիս Մերձավոր արևելքի քրիստոնյաներին, այդ թվում հայերին և հույներին ճնշողների ու կեղեքողների դերում։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ նրանք ոչնչացրին և իրենց տիրույթներին միացրին Միջագետքի և Սիրիայի հայկական իշխանությունները։ Խաչակրաց առաջին արշավանքին հաջորդած տարիներին, XII դարի առաջին քառորդում և հետագա շրջանում, հաճախակի էին դառնում բախումները խաչակիրների և կիլիկեցիների միջև։

Նկատելով խաչակրաց առաջին արշավանքի ժամանակաշրջանում (1097—1100) խաչակիրների և Կիլիկիայի հայ իշխանների համագործակցության մասին հայ և օտար ժամանակակիցների հաղորդած վկայություններից, մի շարք բուրժուական պատմաբաններ հայտնում են խիստ միակողմանի կարծիքներ։ XIX դարի ֆրանսիացի արևելագետ-հայագետ Վիկտոր Լանգլուան գրում է, որ Կիլիկիայում երևալու առաջին իսկ օրից, ֆրանկները (իմա՝ խաչակիրները—Ս. Բ.) հայերի կողմից դիմավորվեցին խանդավառությամբ և նրանցից ստացան մեծ օգնություն։ Միայն խաչակիրներին օգնելու շնորհիվ Լևոն Բ-ն թագավորական թագ ու տիտղոս ստացավ Արևմուտքից, որը ստիպեց Լևոն Բ-ին ենթարկվելու արևմտյան ազդեցությանը։ Դրանով պետք է բացատրել նաև Լևոն Բ-ի կողմից մտցված արևմտաեվրոպական նորամուծությունները երկրի տնտեսական, քաղաքական և վարչական սիստեմում»։ Էդ. Դյուլորիեն, կրկնելով Վ. Լանգլուային, ընդունում էր, սակայն, որ խաչակիր առաջնորդներից ոմանց նվաճողական նկրտումներն ու փառասիրությունը հանգեցրին այն սխալ քաղաքականությանը, որի հետևանքով նվաճված ժողովուրդների շարքն էին դասվում նաև հույները ու հայերը։ Թեև նա վկայակոչում է միայն խաչակիր-«ենիչերիների»[3] օգտին ժամանակակիցների թողած տեղեկությունները, սակայն փաստերի ճնշման տակ գրում է. «Հայկական Կիլիկիայի թագավորության կործանման պատճառներից են հայ ժողովրդական մասսաների բուռն դիմադրությունը կաթոլիկ-ֆրանկների մրտցրած նորամուծություններին և դրանց շուրջը հայ իշխող դասակարգերի ու ժողովրդական մասսաների միջև ծագած ներքին վեճերը, որոնք վերջնականապես թուլացրեցին թագավորությունը և այն կանգնեցրին կործանման փաստի առաջ»[4]։ XX դարի բուրժուական պատմաբան Ժակ դը-Մորգանը, գերագնահատելով խաչակիրների դերը Կիլիկիայի հայկական թագավորության ստեղծման գործում և չափազանցելով արևմտաեվրոպական ֆեոդալիզմի ազդեցությունը, Կիլիկիայի թագավորների կողմից խաչակիր օրդեններին բերդեր և ամրոցներ նվիրելու և վստահելու փաստը բացատրում է նրանով, թե իբր այս միջոցը «գործադրվում էր տեղացի պարոնների (իմա՝ հայ իշխանների—Ս. Բ.) ապստամբական ամեն մի փորձ խեղդելու հա-

---

[1] *Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա. 1956, էջ 58—59։*

[2] V. Langlois, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Armenie, St. Petersbourg, 1861, էջ 42։

[3] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. V, էջ 126։

[4] Ed. Dulaurier, Recueil des historiens des Croisades, Documents Armeniens, t. I, էջ III—IV։

մարդ»։ Միտումնավոր է նաև ֆրանսիացի բուրժուական պատմաբան Ռենե Գրուսսեի այն պնդումը, թե հանձին խաչակիրների հայերը տեսնում էին իրենց ազատարարներին՝ ոչ միայն մուսուլմաններից, այլև նույնիսկ հայ ֆեոդալներից. դա ապացուցելու համար նա վկայակոչում է Եդեսիայի հայ բնակչության ապստամբությունը իրենց տիրոջ՝ Թորոս իշխանի դեմ 1108 թ. և նրանց օգնությունը խաչակիր իշխան Բոլդուինին[6]։

Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանը անդրադառնալով խաչակիրների և Կիլիկիայի հայերի փոխհարաբերությանը և դրա հետևանքներին, դիպուկ կերպով նկատում է. «Խաչակիրների բարեկամությունը մեկուսացնում էր Ռուբինյանների պետությունը, թշնամանքի վիհ փորում նրա և հարևան պետությունների միջև և ի վերջո հարձակման անցած մուսուլման ֆեոդալների կատաղության զոհ դարձնում խաչակիրների քրիստոնյա դաշնակիցներին, դրանց թվում նաև հայերին»։

Ներկա հոդվածում մեր առաջ խնդիր չենք դրել ուսումնասիրության առարկա դարձնել Կիլիկիայի հայկական թագավորության և խաչակիր պետությունների քաղաքական ու տնտեսական հարաբերություններն ընդհանրապես, այլ նպատակ ունենք լուսաբանելու միայն խաչակիր օրդենների գործունեությունը Հայկական Կիլիկիայում։

Ինչպես հայտնի է, XI—XII դարերում ստեղծվել էին երեք հոգևոր ասպետական օրդեններ, որոնց նպատակն էր՝ նախ ուղեկցել և օգնել խաչակիր բանակներին ազատագրելու «Տիրոջ սուրբ գերեզմանը» և մասնակցելու «Ազատագրված վայրերի» պաշտպանությանը և ապա՝ ուժեղացնել Մերձավոր արևելքում ստեղծվող ֆրանկ պետությունների ներքին ու արտաքին դրությունը։ Օրդենների հոգևոր ասպետական անունը խարուսիկ, զավթողական նպատակները քողարկող ձևական հորջորջում էր, իսկ քրիստոնեության պաշտպանությունը՝ զուտ արտաքին մի պատրվակ։ Ըստ էության նրանք հետապնդում էին աշխարհիկ զավթողական շահեր։ Այդ օրդեններն էին՝ 1. Սուրբ Հովհաննեսյան, Հիվանդախնամ կամ Հյուրընկալների օրդենը (կազմակերպված 1070 թ. Երուսաղեմում), 2. Տաճարականների օրդենը (ստեղծված 1118 թ.) և 3. գերմանական ծագում ունեցող տևտոնական օրդենը (հիմնված 1188 թ.)։ Վերջին երկուսը հենց սկզբից հետապնդում էին ռազմական նպատակներ։ Նշելով խաչակիրների կողմից Մերձավոր արևելքի ժողովուրդներին, այդ թվում քրիստոնյաներին և հայերին պատճառած վնասը, ժողովրդական մասսաների շահագործումն ու կեղեքումը, արշավանքներին ականատես Ուռհայեցին գրում է. «Զի հանապազ վասն գանձի առնելոյ անիրաւարար չարչարանօք յաւէր և յապականութիւն դարձուցին զերկիր. և յամենայն ժամ պարապել կային և այլ ոչինչ առնէին, բայց միայն նստեալ խորհէին, զչարութիւն զհիլա և զամենայն ճանապարհս չարեաց սիրէին. բարեաց և ամենայն երախտեաց մոռացողք»[8]։ Մի ուրիշ տեղ, նկատի ունենալով Քրիստոսի գերեզմանը ազատագրող ասպետների թալանչիական արարքները, նա գրում է. «Ահին զօրքն Փռանկաց անթիւ գանձս ոսկւոյ և արծաթոյ և անհամար ծառայս տանէին ի յաշխարհն Փռանկայ»[9]։ Վերոհիշյալ երեք օրդենները գտնվում էին ֆրանկ և գերմանական ֆեոդալների ռազմական միավորումներ ստեղծող պապականության հովանավորության ներքո։ Օրդենների շարքերը համալրում և թարմացնում էին հասարակական զանազան խմբերի ներկայացուցիչներ։ Այսպես, դրանց անդամակցում էին բախտախնդիրներ, գողեր, ոճրագործներ և հասարակության այլ տականքներ[10]։ Հետագայում նրանց մեջ սկսեցին ծառայել հենց նույն օրդենների կողմից սեփականազրկված հողազուրկ գյուղացիներ[11]։ Վերջիններս ստանում էին որոշ արտոնություններ։ Սակայն այդ բոլորով հանդերձ, օրդենները եղել են զուտ ֆեոդալական, զինվորական կարգապահության ենթակա, երկրներ նվաճելու վարժեցված կազմակերպություններ։

Օրդենների գլխավոր նպատակն էր նվաճված տիրիտորիաների թե՛ քրիստոնյա և թե՛ մուսուլման ժողովուրդների հնազանդեցումը, սոցիալական ամեն մի ընդվզման և ապստամբության ճնշումը։ Մյուս կողմից դրանք խնդիր ունեին օգնություն ցույց տալ խաչակիրներին՝ պաշտպանելու և ընդարձակելու Սիրիայի խաչակիր պետությունների սահմանները, կողոպտելու Մերձավոր

---

[5] Morgan J., Histoire du Peuple Armenien.

[6] Grousset R., Histoire des Croisades et du Royaume Franc de Jerusalème, Paris, 1936, t. I, էջ 54, 60։

[7] Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ, գիրք Ա, էջ 58—59։

[8] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 239։

[9] Նույն տեղում, էջ 312։

[10] „Encyclopedia Britanica", 1946, t. XII, էջ 434—440։

[11] G. Dodu, Histoire des institutions dans le Royaume de Jerusalème, 1814, էջ 30։

արևելքի ժողովուրդներին, ապահովելու պապականության լատինականացման և ֆրանկացման քաղաքականության կենսագործումը։

Ռազմական շարժառիթներով միայն պիտի բացատրել օրդենների խիստ կենտրոնացված կառուցվածքը։ Յուրաքանչյուր օրդենի գլուխ կանգնած էր մեծ մագիստրոսը, կամ մեծ մաստերը, սրան էին ենթարկվում պրովինցիալ մագիստրոսներն ու պրիորները և մյուս գործակալները՝ մարշալները, կոմանդորները և գունդստաբլները։ Վերջիններից կազմված էր օրդենի խորհուրդը՝ մեծ մագիստրոսի նախագահությամբ։ Մեծ մագիստրոսները նստում էին Երուսաղեմում, իսկ այնուհետև՝ Կիպրոսում։ Սկզբնական շրջանում նրանց հեղինակությունը բացարձակ չէր, սակայն հետագայում նրանք չէին ենթարկվում նույնիսկ Երուսաղեմի թագավորին, այլ միայն Պապին։ Օրդենների ինքնիշխան գործունեությունը կարելի է բացատրել նրանց տնտեսական հզորությամբ։ Նրանք ֆինանսավորում և վարկավորում էին թագավորներին, այդ թվում Կիլիկիայի հայ թագավորներին[12]։ Նրանց տնտեսական հզորության գլխավոր աղբյուրներն էին նվաճման և գնման միջոցով ձեռք բերված ընդարձակ կալվածքներն ու հողային տիրույթները։ Գաղափար կազմելու համար օրդենների հարստության մասին նշենք, որ Տաճարականների օրդենին էր պատկանում 1000 գյուղ մարգագետիններով, այգիներով, ձկնորսարաններով, շուկաներով և խանութներով հանդերձ։ Բացի այդ, նրանք իշխում էին բազմաթիվ ամրոցների և բերդերի վրա, Երուսաղեմի, Տրիպոլիի, Անտիոքի, Կիպրոսի և Կիլիկիայի քաղաքներում ունեին իրենց տներն ու զորանոցները։ Նրանք հաճախ վեճեր ու միջադեպեր էին ունենում տեղական աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների և նույնիսկ թագավորների հետ։ Այդ պայքարում օրդեններին հովանավորում և պաշտպանում էր Պապը։ Վերջինս ճանաչված էր օրդենների կողմից որպես գերագույն իշխանություն։

Միջադեպերի և վեճերի ժամանակ Կիլիկիայի հայ թագավորները միշտ չէ որ ենթարկվում էին Պապի կարգադրություններին և հաճախ իրենք էին պատժում անհնազանդ վասալ օրդեններին, զրկելով նրանց վասալական ծառայության դիմաց ստացած կալվածներից։ Այսպես, 1199 թ. Կիլիկիայի թագավոր Լևոն Բ-ն կռվում էր Տրիպոլիի իշխանի դեմ Անտիոքի ժառանգության շուրջը։ Կիլիկիայի թագավորի վասալ Տաճարական օրդեներ անցնում է Տրիպոլիի իշխանի կողմը, որի հետևանքով Լևոն Բ-ն գրավում է նրան ենթակա Դաստոն ամրոցը և չի վերադարձնում նույնիսկ Ինոկենտիոս Գ պապի կարգադրությունից հետո։ Անհնազանդ Լևոն Բ-ին Պապը ենթարկում է բանադրանքի[13]։ XIII դարի 20-ական թթ. սկզբներին նույն բախտին են արժանանում նաև Կիլիկիայի Սելևկե նահանգում Հյուրրնկալների ունեցած տիրույթները, որոնք նրանց շնորհված էին 1210 թ. Լևոն Բ-ի կողմից[14]։ Այդ շնորհումը Լևոն Բ-ն կատարել էր այն ռազմական օգնության համար, որ օրդեներ, հակառակ Պապի կամքին, ցույց էր տվել իրեն ընդդեմ Տրիպոլիի իշխանի։ Վերջին հանգամանքից պարզվում է, որ օրդենները շահադիտական նպատակներով նույնիսկ հակառակում էին Պապի կարգադրություններին և չէին օգնում իրենց արյունակից ֆրանկ իշխաններին։ Սակայն նրանք, հավատարիմ իրենց ուխտադրուժ քաղաքականությանը, խառնվում են 1220—1222 թթ. Կիլիկիայում Լևոն Բ-ի մահվանից հետո գահի շուրջը ծագած ներքին ֆեոդալական երկպառակություններին, անցնում են Անտիոքի իշխան Ֆիլիպի կողմը, ապաստան են տալիս Լևոն Բ-ի դուստր Զարելին, որ ամուսնացել էր Անտիոքի իշխանի հետ։ Հյուրրնկալների օրդենի տիրույթները այդ ժամանակ գրավվում են «յարքունիս»[15]։

Կիլիկիայի Հայկական թագավորության և հոգևոր ասպետական օրդենների փոխհարաբերությունների մասին տեղեկություններ են պահպանված հայ և օտար աղբյուրներում Կիլիկիայի արքունիքին վերաբերող փաստաթղթերում և հողային դոնացիաներում։ XII դարի հեղինակներ Ներսես Լամբրոնացին և Միխայել Ասորին որոշ տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայում հաստատված օրդենների մասին։ Ներսես Լամբրոնացին գրում է, որ Կիլիկիայում գոյություն ունեն ֆրանկ հոգևորական եղբայրություններ, որոնք կառավարվում են տարբեր օրենքներով, հագնում են զինվորական հագուստ, ենթարկվում զինվորական կարգապահության և նրանց նպատակն է պայքարել անհավատների դեմ[16]։

Հյուրրնկալների տիրույթները Կիլիկիայում հիշատակվում են 1149 թ.։ Այդ տիրույթները նրանց շնորհել էր Անտիոքի իշխան Ռայմոնդը։ 1163 թ. նրանց տիրույթներին ավելացավ Սա-

[12] V. Langlois, Le tresor..., էջ 122, 123, 124, 125։
[13] V. Langlois, Essai historique..., էջ 72։
[14] Նույն տեղում, էջ 113։
[15] «Մամբրե Սպարապետի պատմութիւն», 1856, էջ 109—111։
[16] «Ներսիսի Լամբրոնացւոյ Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ», Վենետիկ։

բատա ամրոցը Մսիսի կամ Սամեստիայի շրջանում։ Հյուրընկալների օրդենի տիրույթները ավելի են ընդարձակվում Լևոն Բ-ի ժամանակ։ Նրանք ստանում են Նորրերդ և Կամարտեզիա ամրոցները Սելևկիայում, փոխարենը մտնելով վասալական ծառայության մեջ և Լևոն Բ-ին տրամադրելով տարեկան 400 հեծյալ[17]։ 1214 թ. Լևոն Բ-ն 10000 սարակինոսյան բյուզանդի դիմաց Հյուրընկալներին նվիրում է (փաստորեն վաճառում է) ճկեր ամրոցը, Գանամելլա նա վահանդիստը և մի շարք այլ ամրոցներ[18]։ Վերջապես, պետք է հիշատակել Կուվեյրա ամրոցը, որը նվիրել էր Համբրոնի իշխան Կոստանդինը 1234 թ.[19]։

Կիլիկիայում Հյուրընկալները ենթարկվում էին Սելևկիայի բերդատերին, իսկ հետագայում պրեցեպտորին կամ կոմանդորին, որի նստավայրը փոխվեց։ Վ. Լանգլուան, հիմնվելով Աբուլ-Ֆարաջի վկայության վրա և տնտեսելով Սմբատ Սպարապետի վկայությունը, քողարկում է Հյուրընկալների անհավատարմությունը իրենց սենյոր՝ Կիլիկիայի թագավորության նկատմամբ, դրելով, թե Սելևկիան ոսկով հետ գնվեց Հեթում Ա-ի կողմից։ Մինչդեռ դեպքերին ականատես Սմբատ Սպարապետը վկայում է, որ Հյուրընկալները մերժում են ավագ պարոն և պայլ Կոստանդինի պահանջը՝ նրանց մոտ ապաստանած Զարել թագուհուն իրեն հանձնելու մասին։ Սմբատի ասելով Հյուրընկալների կոմանդորը այդ առթիվ պատասխանել է. «Թէ Բերդս Լևոն թագաւոր եղ մեզ, մենք չկարեմք ասել ընդ իր դուստրն թէ ել ի Բերդէս, ապա մեք կու ելնենք. դուք առէք զրերդն ու զինքն, և այստեղ առին զՍելևկիա և զթագուհին»[20]։

Հյուրընկալները այլևս նոր տիրույթներ չեն ստանում Կիլիկիայում։ Հետագայում, 1317 թ. Օշին թագավորը զենքով դրավում է նրանց տիրույթները, որովհետև նրանք հրաժարվում են զինվորական օգնություն ցույց տալ Կիլիկիային։ Այդ առթիվ Հովհան XXII պապը Հյուրընկալներին ուղղած իր նամակներից մեկում հորդորում է նրանց հաշտվել Օշին թագավորի հետ և խրատում՝ «պատկառ կալ պայմանացն որովք շնորհեալ էին նոցա տեղիքն»[21]։ 1320 թ. Օշինը Հյուրընկալներին առաջարկում է հողային նոր տիրույթներ, պայմանով, որ նրանք զինվորական օգնություն ցույց տան Կիլիկիային[22]։ Սակայն նրանք չեն ընդունում այդ պայմանը։ Հյուրընկալներին վերջին անգամ հանդիպում ենք 1375 թ., երբ Գրիգորիոս VI պապը ապարդյուն դիմում է նրանց, խնդրելով օգնության հասնել արդեն կործանված Կիլիկյան թագավորությանը[23]։

Տաճարականների տիրույթները կիլիկյան աղբյուրներում հիշատակվում են XII դարի կեսերից։ Միխայել Ասորին պատմում է, որ դեռևս Թորոս Բ-ի ժամանակ (1145—1169) վեճ է առաջանում Թորոս Բ-ի և Տաճարականների միջև Գաստիմ ամրոցի շուրջը։ Գաստիմը Թորոս Բ-ի կողմից շնորհված էր Տաճարականներին այն պայմանով, որ վերջիններս պետք է օգնեին հայերին։ Շատ ժամանակ չանցած բյուզանդացիները դրավում են ամրոցը Տաճարականներից. սակայն Թորոսը սրանցից վերադրավում է այն։ Տաճարականները նոր են պահանջում ամրոցը, բայց Թորոս Բ-ն հրաժարվում է վերադարձնել պատճառաբանելով, որ նրանք չեն կատարել վասալի իրենց պարտականությունը։ Տեղի է ունենում կռիվ։ Թորոսը հաղթում է։ Բայց հետագայում նա ետ է տալիս Անտիոքի սահմանամերձ ամրոցները, իսկ ասպետները երդվում են բոլոր դեպքերում օգնել հայերին, եթե վերջիններս դրա կարիքը ունենան։ Այդ ամրոցները վերադրավվում և միացվում են Մլեհ (1169—1715) իշխանաց իշխանի դոմենին[24]։ Ռուբեն Բ-ի ժամանակ (1175—1187) Տաճարականները նորից ստանում են ամրոցը, որը, սակայն, կրկին դրավվում է «յարքունիս» Լևոն Բ-ի ժամանակ, 1202 թ., երբ Տաճարականները ուխտադրժորեն օգնում էին Կիլիկիայի թշնամի Տրիպոլիի կոմսին Անտիոքի իշխանության ժառանգության հարցում[25]։ Տաճարականները հիշատակվում են նաև ավելի ուշ՝ 1265 թ., երբ Եգիպտոսի մամլուկները ավերում էին Կիլիկիան, բանդում և այրում Տաճարականների տիրույթները[26]։ Լևոն Բ-ի ժամանակ (1275—1289) Տաճարականների կոմանդորը, որպես Լևոն-

17 «Սմբատ Սպարապետի պատմութիւն», էջ 109։

18 V. Langlois, Essai historique..., էջ 72։

19 Նույն տեղում։

20 «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», 1956, էջ 226։

21 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 300—301։

22 V. Langlois, Essai historique..., էջ 37։

23 Նույն տեղում, էջ 37։

24 «Ժամանակագրութիւն տեառն Միխայիլի Ասորւոյ», Երուսաղէմ, 1871, էջ 454։

25 «Մատթեոս Ուռհայեցւոյ ժամանակագրութեան շարունակողք», էջ 355։

26 Makrizi. Histoire des Sultans Mamlouks d'Egypte par Quatremere. P., 1837. ch. 22, էջ 501։

Բ-ի դեսպան Կահիրեում բանակցություններ է վարում հաշտության պայմանագրի համար[27], XIV դարի սկզբում Տաճարականների տիրույթները գրավվում են Լևոն IV-ի (1299—1307) և Օշինի (1307—1321) կողմից։

Տետոնական օրդենի տիրույթները հիշատակվում են Ավստրիայի դքսի դեսպան Վիլերբրանդ Օլդենբուրգցու աշխատություններում, որը XIII դարի սկզբին այցելել էր Կիլիկիա և 1212 թ. Սսում ներկա եղել ջրօրհնեքի տոնակատարությանը։ Ըստ Վիլերբրանդի, Լևոն Բ-ն Տետոնական օրդենին նվիրել էր Քյումպետֆորդ բերդը Մսիսի շրջակայքում[28], 1212 թ. օրդեն ստանում է Ամուգ կամ Ադամադոնա բերդը։ Վերջապես 1236 թ. Հեթում Ա-ն Հարոնիա քաղաքը իր շրջակայքով պարգևում է նրանց՝ զինվորական ծառայության դիմաց[29]։ Բացի հողային տիրույթներից, օրդեն ստանում է նաև առևտրական շնորհագիր՝ առանց մաքսի և անարգել շրջագայելու Կիլիկիայի տերիտորիայում, քաղաքներում, կալվածքներում, բնակավայրերում, կամուրջներում, դաշտերում և լեռներում[30]։ 1271 թ. Տետոնական օրդեն Սարվանտիկարի տեր Ջոֆրեի որդի Կոստանդինից արտոնություն է ձեռք բերում Սարվանտիկարի մոտ բաժտուն հիմնելու մասին[31]։ Սակայն Տետոնական օրդեն, հավատարիմ իր տրադիցիոն նվաճողական մտադրություններին, երբեք էլ չկատարեց իր վասալական պարտականությունները Կիլիկիայի թագավորության հանդեպ։ Նուտով նրա տիրույթները ևս միացվեցին արքունիքին։ Ինչպես հայտնի է, Տետոնական օրդեն, ձախողության մատնվելով Մերձավոր արևելքում, իր ագրեսիվ գործունեության կենտրոնը տեղափոխեց Արևելյան Եվրոպա։ Այն բանից հետո, երբ Ինոկենտիոս III պապի նոր հոգևոր միաբանություն ստեղծելու ջանքերը ձախողվեցին, 1230 թ. նա դիմեց Երուսաղեմի թագավորությանը աջակցող և Մերձավոր արևելքը գավթող Տետոնական օրդենին։ Վերջինիս հետևեցին «գերմանական կողոպտիչների և դաղութականների նոր հոսանքները»[32]։ Այդ մասին Մարքսը գրում է. «Պրուսների երկրում ասպետները մոլեգնում են. իսկ պրուսները քաջաբար դիմադրում են, բայց ավելի ու ավելի են ուժասպառ լինում»[33]։ Ընդ որում, բազմամյա պայքարը լերջանում է պրուսների պարտությամբ. Մերձավոր արևելքում անհաջողության մատնված Տետոնական օրդեն պրուսների երկրում կազմեց Տետոնական մի մեծ իշխանություն։ Երբ օրդեն ձգտում էր ընդարձակել իր տիրույթները ի հաշիվ ռուսական հողերի, 1242 թ., Չուդ լճի վրա տեղի ունեցած հռչակավոր Սառցամարտում ջախջախվում է Նովգորոդի ռուս իշխան Ալեքսանդր Յարոսլավիչի զորքերի կողմից։

Ինչպես նշեցինք, օրդենները վասալական կախման մեջ մտնելով Կիլիկիայի թագավորից, վերջինից ստանում են հողային տիրույթներ։ Այդ մասին են վկայում նրանց օգտին կատարված հողային նվիրատվությունները, առևտրական շնորհագրերը և այլ կարգի փաստաթղթերն ու նամակները, որոնք հրատարակված են ֆրանսիացի հայագետ Վ. Լանգլուայի կողմից „Le tresor des chartes d'Armenie" փաստաթղթերի ժողովածուում[34]։

Կիլիկիայի ֆեոդալական հողատիրության, հատկապես օրդենական հողատիրության հարցերին վերաբերող փաստաթղթերի թիվը 18-ն է։ Դրանց վերնագրերից անգամ երևում է միջնադարյան ֆեոդալական պայմանական հողատիրությանը առանձնահատուկ հետևյալ փաստը. յուրաքանչյուր հողային նվիրատվություն վավերացվում և հաստատվում էր նվիրողի ժառանգորդի կամ հաջորդի (ասենք՝ Լևոն Բ-ի ժառանգորդ Ռուբեն Ռայմոնդի կամ նրան հաջորդող Հեթում Ա-ի) կողմից։ Բացի դրանից հողային նվիրատվությունը հիմնականում կատարվում էր վասալի զինվորական ծառայության և օգնության դիմաց, ընդ որում փաստաթղթերում նշված է վասալի անմիջական պարտականությունը, այն է՝ պաշտպանել սենյորին ենթակա պետության սահմանները։ Այսպես, 1210 թ. ապրիլին և օգոստոսին Լևոն Բ-ն Սելևկիայի Նորբերդ և Կամարտեզիա սահմանամերձ ամրոցները իրենց շրջակա տերիտորիաներով տալիս է Հյուրընկալներին «որպես պարգև» „beneficium" այն բանի համար, որ վերջիններս պաշտպանել են Կիլիկիան Իկոնիայի սուլթանությունից և համատեղ կռվել վերջինիս բանակների դեմ[35]։ 1212 թ.

27 Նույն տեղում, հատ. II, էջ 160, 201։

28 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 476—477։

29 V. Langlois, Le tresor des chartes d'Armenie, էջ 118, 141—143։

30 Նույն տեղում, էջ 142։

31 «Բազմավեպ» 1873, էջ 108—112։

32 „Архив Маркса и Энгельса", t. V, էջ 343։

33 Նույն տեղում, էջ 342։

34 V. Langlois, Le tresor des chartes d'Armenie, Venise, 1863.

35 Նույն տեղում, էջ 114—116։

ապրիլին ընդունված հողային նվիրատվությամբ, Լևոն Բ-ն Ամուտ բերդը պարգևում է Տետոնական օրդենին, փոխարեն վերջինս պարտավորվում է զինվորական օգնություն ցույց տալ թագավորին։ Այստեղ ընդգծված՝ նվիրատվության պարգևական՝ „beneficial" բնույթը։ 1236 թ. Հեթում Ա-ն նույն օրդենին պարգևում է Հարոնիա քաղաքը շրջակա տիրություններով, պայմանով, «որպես և խոստանան մեզ պահպանել և պաշտպանել զթագաւորութիւն մեր, յամենայն կողմանց, իբրև եղբարք, հարազատք, և բարեկրօնք անբաժանելիք»[36]։

Հողային նվիրատվություններից մեկում Լևոն Բ-ն Հյուրընկալներին խոստանում էր պարգևել Լարանդա սահմանամերձ ամբողջ, եթե վերջինս ընկնի Կիլիկիայի թագավորության տիրապետության տակ. դրա իրականացման համար նվիրատվության մեջ կոչ է անում նրանց՝ օգնել Կիլիկիային Իկոնիայի սուլթանության դեմ նրա մղած պայքարում։ Նույնիսկ հողերի վաճառքի կամ նախագրավական դնելու դեպքում գնող օրդեներ պարտավորվում էր զինվորական ծառայություն և օգնություն ցույց տալ սենյորին՝ Կիլիկիայի թագավորին։ Օրդենները ծառայություն էին կատարում նաև Կիլիկիայի արքունիքում։ Վիլերբանդ Օլդենբուրգցին, նկարագրելով 1212 թ. ջրօրհնեքի ծիսակատարությունը, գրում է, թե օրդենների զինվորականները ուղեկցում էին Լևոն Բ-ին նրա աջ և ձախ կողմից, մյուս գործակալների հետ հավասար[37]։

Հողային նվիրատվություններում ընդգծված է պարգև ստացողի մշտնջենական, ժառանգական հողային սեփականատիրական իրավունքը[38]։ Այսպես, 1236 թ. փաստաթղթում ասված է. «և այդ զքաղաքդ (Հարոնիա) նախասացեալ և գերկիրդ նախանշանակեալ զոր մի ըստ միոջէ յիշեցար և սահմանօքն որոշեցաք, տուաք հրեշտակերամ եղբայրութեան հիւանդանոցային Ալամանաց, մշտնջենաւոր և յարամեալ ժառանգութիւն, որոց են յայժմուս և որ յետոյ գալոցն են»[39]։ Սակայն այդ իրավունքը պայմանական էր։ Տիրությունների վրա նրանք իշխում էին „dominum utile"-ի, այսինքն հողօգտագործման իրավունքով։ Ինչպես տեսանք, այդ տիրությունները վերագրավվում էին սենյորի կողմից՝ հենց որ վասալը չէր կատարում հողային նվիրատվության մեջ հիշատակված վասալական պարտականությունները։ Պետք է ընդգծել նաև հետևյալ հանգամանքը. ժառանգական իրավունքը անձնական չէր և ոչ էլ տոհմային, քանի որ օրդենները գլխավորող մագիստրոսի կամ կոմանդորի պաշտոնները ընտրովի էին. մյուս կողմից՝ օրդենի անդամները կուսակրոններ էին, հետևաբար խոսք անդամ չէր կարող լինել տոհմային ժառանգական իրավունքի մասին։ Ժառանգական իրավունքը վերաբերում էր ամբողջ ասպետական օրդենի կազմակերպությանը։

Հողային նվիրատվությունները հաճախ ստացել են դրամական մեծ գումարներ փոխառնելու, դրանց դիմաց կալվածքները նախագրավական դնելու կամ էլ որոշ գումարով վասալներին վաճառելու սովորական առուծախի տեսք։ Ուշագրավն այստեղ այն է, որ երկու դեպքում էլ գործարքները կատարվել են հողային նվիրատվության սովորական եղանակով, որպեսզի շրջանառության տարի կերպարանք և «հաճելի թվան» աստծուն։ Այդ նույն ձևը սովորական երևույթ էր միջնադարյան Եվրոպայում՝ Ֆրանսիայում, Իտալիայում և Երուսաղեմի ֆրանկ պետության մեջ։ Մինչդեռ այդ երկրների սյուզերեն-սենյորները հաճախ ընկնում էին ֆինանսական ծանր դրության մեջ, որը, ինչպես օրինակ, Կիլիկիայում հետևանք էր երկարատև պատերազմների։ Այս պատերազմների հետևանքով թագավորները ստիպված էին լինում վաճառելու հողային տիրություններ, դրամական մեծ գումարներ ստանալով վասալներից։ Այս միջոցները հայոց թագավորները օգտագործում էին պատերազմական ծախսեր անելու համար կամ էլ ստացված գումարները որպես օժիտ տրվում էին թագավորական դուստրերին։

Վերոհիշյալ հողային նվիրատվությունների ուսումնասիրումը մեծ նշանակություն ունի Կիլիկիայի ֆեոդալական հողատիրության մի շարք հարցերի լուսաբանման համար։ Այդ վավերագրերից երևում է, որ ֆեոդալական հողատիրության բոլոր ձևերի համար հողին տիրելու գլխավոր միավորը հանդիսացել է բերդ-ամրոցը կամ քաղաք-ամրոցը դրանց ենթակա բնակավայրերով, շեներով, գյուղերով ու ագարակներով, արտերով ու այգիներով, անդաստաններով ու լեռներով հանդերձ։ Ընդ որում, ստացող ֆեոդալը կոչվում էր բերդատեր, կամ հայրենատեր-բերդատեր, իսկ լատինական արտահայտությամբ՝ „casteilanus" («բերդատեր»)[40]։

---

36 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 205—207։

37 Նույն տեղում, էջ 476։

38 V. Langlois, Le tresor..., էջ 120։

39 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 206—207։

40 V. Langlois, Le tresor..., էջ 123։

1236 թ. Տետոնական օրդենի օգտին կատարված հողային նվիրատվության մեջ ասված է, որ Հարոնիա քաղաք-ամրոցը պարգևվում է օրդենին, ինչ վիճակում որ նա եղել է նրա նախորդ տիրակալ Ջոֆրեի ժամանակ։ Դոնացիայում կարդում ենք «Զորս յիշեցուք մի ըստ միոջէ վաներովն, դիւղովք, ադարակօք, հողով և ջրով, ադօրեռք, դետեօք, լերամբք, բլրովք և պտղաբեր հարթ վայրօք և ամենայն պտղովք, կալուածովք և ստացուածովք։ Արդ մի ոք յիշեսցէ յամենայն երկրիս հայոց ի մերոյ հպատակաց, ոչ մեծ և ոչ փոքր հեղեղ կամ ոյք առնել Սրբոյ Տաճս և հոգևոր եղբայրութեանս, կամ զսահմանս նոցին և զկալուածն նուազեցուցանել»[41]։

1214 թ. Հյուրընկալներին տված նվիրատվության մեջ կարդում ենք. «Պարգևում եմ... վաներ ամրոցը մշակված և անմշակ հողերով... անտառներով և արոտներով և այլ ինչքով»[42]։ Այսպիսով, նվիրատվություններում բերդերն ու ամրոցները հիշատակվում են որպես հողին տիրելու միավոր։ Նույնպիսի բովանդակություն են ունեցել հայ բերդատեր իշխանների տիրույթները։ Օրինակ, Լամբրոնի իշխան Կոստանդինի տիրույթները արքունիքին միացնելու առթիվ պատմիչը գրում է. «Արքայն (Հեթում Ա) զամենայն դիւղս և զանդաստանս Լամբրոնի արար ի ներքո հրամանաց իւրոց»[43]։ Նույն ձևով էլ հիշատակվում խոշոր ֆեոդալ սենեսկալ Սիր Ադամի տիրույթները[44]։

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» համապատասխան հոդվածներում արձանագրված է, որ յուրաքանչյուր պարոնության կենտրոնը հանդիսանում էր որևէ բերդ կամ ամրոց և որ բերդատեր պարոնը տիրել է բերդի շուրջը գտնվող գյուղերին և հողերին[45]։ Անշուշտ այդ կարելի է բացատրել նրանով, որ անընդհատ ռազմական ընդհարումների մեջ գտնվող Կիլիկիայի ֆեոդալների վասալական պարտականության գլխավոր պայմանը դարձել էր զինվորական ծառայությունը թագավորի համար, հետևաբար, Կիլիկիայի 72 բերդերի պաշտպանությունը, շինարարությունն ու պահպանումը ֆեոդալ իշխանների գլխավոր զբաղմունքն էր, մի երևույթ, որը հատուկ էր նաև միջնադարյան Եվրոպային։

Ինչպես տեսնում ենք, օրդենների վասալական կախվածությունը Կիլիկիայի Հայկական թագավորությունից կրել է հողային բնույթ։ Սակայն օրդենական հողատիրությունը, լինելով բոլորովին նոր երևույթ հայկական ֆեոդալական հողատիրության մեջ, ավելի շատ նմանվել է խաչակիր պետություններում կամ արևմտաեվրոպական երկրներում տիրող ֆեոդալական հողատիրությանը։ Այս մասին ուղղակի մատնացույց է արված հողային նվիրատվություններում։ Այսպես, 1212 թ. ապրիլին Տետոնական օրդենի օգտին կատարված հողային նվիրատվության մեջ նշված է, որ տվյալ հողային դոնացիան կատարվում է համաձայն ֆրանկ օրենքների[46]։

Այժմ տեսնենք, թե օրդենական հողատիրությունը ֆեոդալական հողատիրության որ ձևին էր համապատասխանում։ Հողային դոնացիաներում ուղղակի մատնացույց է արված, որ տվյալ բերդը իր շրջակա հողային տիրույթներով թագավորը պարգևում է օրդենին։ Այդ արտահայտվել է հայերեն պարգևական տերմինին համանիշ՝ միջնադարյան Եվրոպայի պարգևական հողատիրությանը հատուկ „beneficium" տերմինով։ Ղ. Ալիշանը 1236 թ. հողային նվիրատվության մեջ օգտագործված լատինական „beneficium" տերմինը իրավացիորեն թարգմանել է պարգևական[47], իսկ „Dono et concedo" տերմինները պարզել հայերեն տերմինով։ Միջնադարյան Եվրոպայի ֆեոդալական հողատիրությանը հատուկ „beneficium" տերմինը պարգևականի հետ նույնացրել են նաև ակադեմիկոս Հ. Մանանդյանը[48] և Նիկողայոս Ադոնցը։ Պրոֆ. Ս. Հակոբյանը նույնացնելով պարգևական և „beneficium" տերմինները, նրանց տակ հասկանում է այն իրավունքը, որը տրվում էր աշքի ընկնող պետական և զինվորական ծառայության դիմաց, ժամանակավորապես կամ ցմահ օգտագործելու համար[49]։ Պրոֆ. Ս. Պողոսյանը գրում է. «Պարգևական հողատիրությունը ի տարբերություն «հայրենիք» հողատիրության ձևին, կոչվել

---

41 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 207։

42 V. Langlois, Le tresor..., էջ 122—123։

43 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, 1909, էջ 270—272։

44 «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», էջ 222։

45 Смбат Спарапет, Судебник, Ереван, 1958, пер. А. Галстяна, էջ 9, 14, 15։

46 V. Langlois, Le tresor..., էջ 120, 123, 141 և այլն։

47 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 207։

48 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 27։

49 Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1956, էջ 172։

է պարգև և պարգևականք կամ արքայատուր, որոնք համապատասխանում են արևմտաեվրոպական Feod. lehn և benefizium հասկացողություններին[50]։

«Պարգև» և «պարգևել» տերմինները օգտագործել են նաև Կիլիկիային վերաբերող հայկական մատենագրական աղբյուրները, բնութագրելու համար հողային նվիրատվությունները և հողային տիրույթները։ Այսպես, Ռուբեն Բ-ն «սկսեալ տալ պարգևս ամենեցուն առատապես, զամենեցուն սիրտ և զօրքի յինքն յանգոյց և որ դիմէր նոքօր քաջապէս մղէր զհոյլս թշնամեացն, որով էառ զՄսիս զԱդանայ և զՏարսօն»[51]։

Լևոն Բ-ի նվիրատվությունների մասին կարդում ենք. «Եւ ուր իմանայր թէ գոյ այր իմաստուն և գիտուն և աչող է գործ կամ ի գինուորութիւն, կամ ի խօսս և ի պատասխանս յղէր ս կոչէր խոստմամբ և հանգուցանէր պարգևօք, յորոց մի ես եմ Սմբատ Սպարապետ թարգմանող տառիս և պատմութեանս»[52]։ Որ այդ պարգևները տրվում էին զինվորական ծառայության դիմաց, այդ երևում է նաև հաջորդ վկայությունից. «Ս· այսպիսի խոհեմ իշխանօք և քաջ զօրօք և առատ պարգևօք և ընդարձակ սեղանօք զամենն յօժար կազմէր ի կռիւ»[53]։

XIII—XIV դարերում բազմաթիվ բերդեր և նրանց ենթակա գավառներն ու հողային տիրույթները անցնում են մի ֆեոդալից մյուսին այն բանի համար, որ տվյալ ֆեոդալ վասալը խախտում էր սենյորի նկատմամբ կատարելիք վասալական պարտականությունները։ Նույնը որոշ տարբերությամբ տեսնում ենք օրգենական հողատիրության մեջ։ Կիլիկիայում պարգևական կամ beneficium հողատիրության ձևը նույնպիսի զարգացում ապրեց, ինչ որ նրա նույնատիպը Արևմտյան Եվրոպայում։ Այստեղ այն տրվում էր վասալին ցմահ օգտագործման համար, հետագայում վերածվում էր „feodum"-ի ժառանգական իրավունքով։ Թեև պայմանական էր։ Հետևաբար XIII—XIV դդ. Կիլիկիայում չնչվում է «պարգևական» և „feod" «հայրենիք» հողատիրության ձևերի միջև եղած տարբերություն։ Ընդ որում, Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում որոշ դեպքերում տարբերություն չի դրվում «պարգևականի» և «հայրենիքի» միջև. ֆեոդ-հայրենիքը ևս միացվում էր արքունի կալվածքին, եթե ֆեոդալը մեռնում էր անժառանգ[54]։ «Հայրենիքը» դրավվում էր «յարքունիս» նաև այն ժամանակ, երբ հայրենատերերդատերը չէր կատարում վասալի պարտականությունները, ինչպես այդ պատահել էր Լամբրոնի իշխան Կոստանդինի տիրույթների հետ[55]։ Սմբատի «Դատաստանագրքում» այդ մասին ասված է. «Թէ իշխան կամ այլ ոք՝ որ ի թագաւորի ծառութիւն և ի հնազանդութիւն լինի. և իրք պատճառ այնէ թագաւորին. հայնց որ մեռնի իրաւնաւք, նա եղբարքն և որդիքն՝ որ յաւաղադոյն լնալ լինին նա վասն հաւրն մեղացն չլինին զրկածք ի հայրենեացն ի ժառանգութենէ»[56]։

Վերը ասածից երևում է, որ «հայրենիքը» «ալոդ» չէ, այլ ֆեոդ է, որը պայմանական է և ժառանգական այնքանով, որքանով որ ֆեոդատերը գտնվում է թագավորի մոտ ծառայության մեջ։ Այստեղ «ծառայութիւն» կամ «ծառութիւն» տերմինը հոմանիշ է եվրոպական ֆեոդալիզմի „servitium"-ին։ Սա ցույց է տալիս, որ բենեֆիցիալ-պարգևական հողերը դառնում էին ժառանգական «հայրենիք-ֆեոդ» տիրույթ։ Այդպես էր լինում հատկապես այն ժամանակ, երբ ֆեոդատերերը այդ հողերի վրա կատարում էին շինարարական աշխատանքներ։ Նույն Դատաստանագրքում կարդում ենք. «Եւ թէ ժառանգաւոր իշխան յիր երկիրն ծախվորի և բերդ կամ ամրոց շինէ կամ այլ ինչ, նա վասն այնոր կու շինէ, որ իր ու իր յետ միացացն մնացական մնա. մի լիցի թագաւորին յայն ձեռնարկել այլ իշխանքն զիրենցն ունեան մնացական և թագաւորի ուժ տան»[57]։

Այսպիսով, պարգևական հողերը դառնում էին «հայրենիք» և դրանով վերանում էր նրանց միջև եղած տարբերությունը։ Ընդ որում, երկուսի հիմքում էլ ընկած էին վասալի պարտականությունները սենյորի նկատմամբ։

---

50 Ս. Պ. Պողոսյան, Դյուզացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում, էջ 90։

51 «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», 1956, էջ 192։

52 Նույն տեղում, էջ 247։

53 Նույն տեղում, էջ 253։

54 Ղևոնդ Ալիշան, Սիսուան, էջ 207։

55 «Կիրակոսի Գանձակեցւոյ պատմութիւն», էջ 271—272։

56 Смбат Спарапет, Судебник, էջ 15։

57 Նույն տեղում, էջ 14։

Օրդենական (պարգևական կամ ֆեոդալական) հողատիրությունը, ի տարբերություն ֆեոդալական հողատիրության մյուս ձևերի, ուներ մի շարք հատկանիշներ։ Ինչպես երևում է հոդային դոնացիաներից, օրդենները, ստանալով պարգև-ֆեոդներ, դրա հետ մեկտեղ ստանում էին նաև որոշ արտոնություններ։ Այսպես, Կիլիկիայի թագավորը՝ սենյորը, օրդեններին ազատում էր այն հարկերից, որ տալիս էին մյուս ֆեոդալները, երբ տիրում էին այդ նույն հողերին։ Տևտոնական օրդենը, օրինակ, ազատվեց հարկերից, երբ Հեթում Ա-ից ստացավ Հարոնիա քաղաքը որպես տիրույթ[58]։ Ֆեոդալի կողմից սենյորին տրված հարկը մեծ մասամբ կոչվել է բաժ[59], իսկ հողային նվիրատվություններում բոլոր տեսակի հարկերը և տուրքերը՝ „servitium"[60]։ Վասալ ֆեոդալը, բացի զինվորական և գործակալական ծառայությունից, սենյորին վճարում էր նաև որոշ դրամական հարկ։

Օրդենները չէին ազատվում եկեղեցու օգտին դանձվող տասանորդից[61], քանի որ նրանք միևնույն ժամանակ եկեղեցու հոգևոր վասալներն էին։ Այդ մասին է վկայում Հյուրընկալների և Մսիսի լատին արքեպիսկոպոսի միջև ստորագրված 1246 թ. կոնվենցիան[62], որը համապատասխանում էր Կիլիկիայում տիրող օրենքներին։ Այդ մասին Սմբատի Դատաստանագիրքը հատուկ հոդվածներով սահմանում էր աշխարհիկ ֆեոդալների կողմից եկեղեցուն տրվելիք պարտադիր հարկը՝ տասանորդը, որից չէր ազատվում նույնիսկ թագավորը։ «Եւ թագուորն զիր շահուն տասնեակն պատեհ է որ եկեղեցոյն տայ», իսկ իշխանները «զիրենց տասնեակն տան յիրենց եկեղեցեացն»[63]։

Այժմ հողային նվիրատվությունների մի շարք առանձնահատկությունների մասին։ Հողային նվիրատվություններից երևում է, որ հողային տիրույթները իրարից բաժանվել են հատուկ նշաններով՝ սահմանային քարերով կամ խոշոր ծառերով։ 1212 թ. Տևտոնական օրդենին տրված հողային նվիրատվության մեջ նշված է, որ Ամուտի տիրույթը Կամարտեզիայի տիրույթից բաժանված է սպինոզայի ծառով, իսկ մյուս տիրույթից բաժանվում է մի խոշոր ծառով և ածխով[64]։ Մաքսատուն ունենալու վերաբերյալ 1271 թ. Սարվանդիկարի տեր Կոստանդինի կողմից Տևտոնական օրդենին տրված շնորհագրում որպես սահմանագիծ-նշան մատնացույց է արված տանձենին[65]։ Քարը և ածուխը, որպես հողային տիրույթները սահմանազատող նշան, բերված են «Անտիոքի ասսիզներում». դրանց մեջ ասված է, որ որպես հողի սահման դնեն «գործելի» և քար[66]։

Յուրաքանչյուր ֆեոդալ-հողատեր հողի կամ ֆեոդի իրեն պատկանելու մասին ունեցել է հատուկ փաստաթուղթ, որը անպայման կնքվել և հաստատվել է պարոնության սիկելով, ատյանով և վկաներով[67]։ Այդպիսի փաստաթղթերի և արձանագրությունների մասին խոսում են Սմբատ Սպարապետը, Կիրակոս Գանձակեցին և Միխայել Ասորին։ Վերջինիս ժամանակագրության շարունակողը գրում է, թե Լևոն Բ-ն պարգևներ էր տալիս վանքերին «արձանագրով սեփականէր նոցա դիւղս և ագարակս, այգիս և անդաստանս»[68]։ Նույնը մենք տեսնում ենք օրդենների օգտին կատարված հողային նվիրատվություններում։

Հայտնի է, որ ֆեոդալական հողատիրության ժամանակ հաճախ որևէ հող կամ կալվածք ստացվում կամ նվիրվում է հողօգտագործման համար վասալական հիմունքներով։ Այդ կապակցությամբ շնորհագրի կամ վավերագրի տակ ստորագրում էին հողի հետ առնչություն ունեցող անձնավորությունները։ Այդ դերում հանդես էին գալիս սենյորի և վասալի վկաները, որոնք ստորագրում էին հողային նվիրատվությունների տակ, և լինում էին արքունիքի բարձրաստիճան գործակալներ՝ արքեպիսկոպոսներ, օրդենների մագիստրոսներ, կամ կոմանդորներ և ասպետներ[69]։

---

[58] V. Langlois, Essai historique..., էջ 51։

[59] «Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց», 1891, Ս. Պետերբուրգ, էջ 39։

[60] V. Langlois, Le tresor..., էջ 143։

[61] „Documents Armeniéns", t. III, էջ 749։

[62] V. Langlois, Essai historique..., էջ 71։

[63] Смбат Спарапет, Судебник, էջ 11—12։

[64] V. Langlois, Le trésor..., էջ 119։

[65] «Բազմավեպ», 1873, էջ 108—112։

[66] „Assises d'Antioche", trad. p. l'Alichan, Venise, 1876, էջ 39։

[67] Նույն տեղում։

[68] «Ժամանակագրութիւն տեառն Միխայիլի Ասորւոյ», Երուսաղեմ, 1871, էջ 504։

[69] V. Langlois, Le tresor..., էջ 108, 116, 122, 141—143։ V. Langlois, Essai.

Այսպիսով, օրդենական խոշոր հողատիրություններ հանդիսացավ մի նոր երևույթ հայկական ֆեոդալիզմի պատմության մեջ։ Օրդենական հողատիրություններ Կիլիկյան Հայաստանում շատ կողմերով նման էր արևմտաեվրոպական ֆեոդալական հողատիրություններ և ենթարկվում էր այդ օրենքներին, այն որոշ չափով ներգործում էր հայկական ֆեոդալիզմին հատուկ վաղեմի ինստիտուտների վրա։

ИЗ ИСТОРИИ ПОЛИТИЧЕСКИХ И ЭКОНОМИЧЕСКИХ СНОШЕНИЙ ОРДЕНОВ КРЕСТОНОСЦЕВ С КИЛИКИЙСКОЙ АРМЕНИЕЙ

С. В. БОРНАЗЯН

(Резюме)

Период возникновения Киликийского армянского государства совпал с походами крестоносцев на Ближний Восток. Оттеснив сельджуков из приморских районов Малой Азии, крестоносцы помимо своей воли способствовали созданию благоприятных условий для политического и экономического укрепления Киликийского армянского государства. Исходя из этого обстоятельства, ряд французских буржуазных историков (В. Ланглуа, Э. Дюлорие, Ж. де Морган, Р. Груссе) преувеличивает роль крестоносцев, в том числе их рыцарских церковных орденов, в политической и экономической жизни Киликийского армянского государства. Формирование и характер феодальных отношений Киликийской Армении указанные выше историки считают результатом влияния западноевропейского феодализма, якобы проникшего в Киликию посредством крестоносцев. Между тем исследование политических и экономических взаимоотношений между Киликийской Арменией и орденами крестоносцев того периода совершенно ясно показывает, что ущерб, нанесенный крестоносцами Киликийскому армянскому государству, был значительно более велик, чем их временная и непроизвольная помощь.

Ордена крестоносцев получали от своих новых сюзеренов—армянских царей—обширные земельные пространства в пограничных с Киликией районах на условиях beneficium и feodum, во многом схожих с формами землевладения западноевропейского феодализма. Орденское землевладение стало новым явлением в эпоху развитого армянского феодализма.

Ордена крестоносцев, следуя своей вероломной политике, вступили впоследствии в конфликт со своим сеньором — армянским царем, вследствие чего были выселены из Киликии в конце XIII в. и тем самым перестали играть какую-либо роль в экономической и политической жизни Киликийской Армении.